



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
un - 80

~~313
1140 178~~





Ա Տ Կ Կ Ե

891-71
S-80
L. V. S O L U S O 6 19 NOV 2010
ՄՀ.



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍ

ՊԱՏՄԻԱԺԻ

1908
3.5 Հ. Ձ. 8

Թարգմ. Ա. Ա.

Ա Լ Կ Ք Ս Ա Ն Դ Ր Ա Պ Օ Լ
Արագածիպ-Տպաւան Յովհ. Ավիճեանցի

1903

(5)

ԵՐԵՔ ՄԱԿ

Ի

Աշուն էր: Մեծ ճանապարհով արշաւասոյր զնում
էին երկու կառք: Առաջի ճեպակառ ըում նստած էին
երկու կին: Մէկը տիրուհին էր նիհար ու գունատ:
Միւսը աղախինը, ողորկ-կարմիր վէմքով և լիք-լիք:
Գունաթափ գլխարկի տակից, զուրս էին ցցուած
կարճ չոր մազերը, որոնց կտրուկ կերպով ուղղում էր
պատռած ձեռնոցի մէջ դժնուղ կարմիր ձեռքը: Զա-
լի աղլուխով ծածկած բարձր կուրծքը առողջութիւն
էր բուրում, արագաշարժ սև աշքերը մերթ լուսա-
մուտով հետեւում էին փախչող դաշտերին, մերթ
երկիւղով նայում տիրուհուն, մերթ անհանգիստ
պրատում էին ճեպակառքի անկիւնները: Աղախինի
դիմաց ճօճուում էր տիրուհու գլխարկը, որ կախուած
էր ցանցից, նրա ծնկներին պառկած էր մի յակոտ,
նրա ոտները քիչ բարձր էին յատակի վրայ դրած
արկղիկներից և հազիւ լսելի ձայնով թմբկահարում
էին նրանց վրայ կառքի զսպանակների ճոճոցի և
տալակիների շրխշրիսկոցի հնչիւնների շափով:

Дозволено Цензурою. 10-го Июня 1903 г. Тифлисъ.



Զեղները ծնկների վրայ ծալած և աշքերը փակ՝
տիրուհին թոյլ ճօնւում էր բարձերի վրայ, որոնք
դրուած էին նրա մէջրի տակ, և թեթեակի դէմքը
խոժոռած՝ զսպւած հազում էր, նրա գլխին դրած
էր գիշերային սպիտակ շամչիկ և կապուտ վզնոցը
փաթաթւած էր բնրոյշ, գունատ վզին: Մի ուղիզ
գիծ, որ մտնում էր շամչիկի տակ, բաժանում էր
խարդեաշ, շափազնց հարթ օծած մազերը, և մի
ինչ-որ չոր, մեռելային բան կար այդ լայն գծի
կաշւի մէջ: Տամուկ, քիչ գեղնաւուն կաշին ամուր
չէր ձգում դէմքի նուրբ և գեղեցիկ պծագրութիւն-
ները և կարմրին էր տալիս թշերի և այտուկիների
վրայ: Ճըթումքները չոր էին և ոչ հանգիստ, նոսր
արտեանունքները չեին ոլորտում, և ճանապարհորդա-
կան մահուտէ կրկնոցն ուղիղ ծալուածքներ էր անում
ներս ընկած կրծքին: Չնայած որ աշքերը փակ էին,
տիրուհու դէմքն արտայայտում էր յովնածութիւն,
գրգիռ և սովորական տանջանք:

Սպասաւորը կոթնած բազկաթոռին՝ ննջում
էր կառքի նստարանի վրայ, փոստային կառապանն
աշխուժով կանչելով քշում էր քրտնած խոշոր չորս
ձիերին, երեսմն նայելով միւս կառապանին, որ յե-
տեից սայլակում նոյնպէս գորգուում էր ձիերի վրայ:
Ենթապատի զուգընթաց լայն հետքերը հաւասար և
արագ ձգում էին ճանապարհի կրային ցեխի վրա-
յով: Երկինքը գժգոյն էր և ցուրտ, խոնաւ մէզը

լցնում էր դաշտերը և ճանապարհը, Կառքում օդը
հեղձուցիչ էր և օդքիօնի ու փոշու հոտ էր գա-
լիս: Հիւանդը զլուխը յետ գցեց և հանդարտ բացաւ
աշքերը: Մեծ-մեծ աշքերը փայլուն էին և շրնազ
մութ գոյնի:

— Ելի, ասաց նա՝ ջղաձգօրէն գէն հրելով գե-
ղեցիկ մաշւած ձեռքով աղախնի սալօպի տուտը,
որը քիչ էր մնում կպչի նրա ոտին, և նբա բերա-
նը հիւանդու կերպով ծուեց: Մատղեօշան երկու ձեռ-
քով հաւարեց սալօպը, ոտքի կանգնեց և գէնը նստեց:
Նրա թարմ դէմքը վառ-վարդի գոյն ստացաւ: Հի-
ւանդի շրնազ մութ աշքերը աղահարար հետեւում
էին աղախնի շարժումներին: Ցիրուհին երկու ձեռ-
քով յենեւց նստարանին և նոյնպէս կամեցաւ վեր
կենալ, որպէսզի աւելի բարձր տեղ նստի, բայց ու-
ժերը թոյլ շտին: Նրա քերանը ծուեց, և ամբողջ
երեսն այլակերպւեց, անդօր, շար իրօնիայի արտա-
յայտութեամբ: «Թոնէ զու օգնէլի ինձ» . . . «Եկ՝
հարկաւոր չէ: Ես ինքս կարող եմ, միայն թէ վրաս
մի զնիք քո այդ պարկերը, թէ Աստուած կսիրես» . . .
Ե՛, աւելի լաւ է՝ ձեռք մի տար, քանի որ չես կա-
րողանում: Ցիրուհին ծածկեց աշքերը և նորից կո-
պերն արագ բարձրացնելով նայեց աղախնին: Հի-
ւանդի կրծքից մի ծանր ճառաշանք զուս թռաւ,
բայց այդ հառաշանքը գեռ շփերջացած՝ փոխեց հա-
զի: Նու երեսը դարձրեց, դէմքը խոժոռուեց և երկու

ձեռքով բռնեց կուրծքը: Երբ հաղն անցաւ, նա նորից ծածկեց աշքերը և շարունակեց մնշարժ նստել: Կառքն ու սայլակը մտան մի գիւղ: Մատրեօշան հաստ ձեռքը հանեց թաշկինակի տակից և խաչակինքց:

— Այդ ինչ է, հարցրեց տիրուհին:

— Կայարանն է, տիկին:

— Էլ ինչ ես խաչ հանում, հարցնում եմ:

— Եկեղեցի է, տիկին:

Հիւանդը դարձու դէսի լուսամուտը և սկսեց հանդարտ խաչահանել, խոշոր աշքերով նայելով կիւզական մեծ եկեղեցուն, որի շուրջն էր պտտում հիւանդի կառքը:

Կառքն ու սայլակը միասին կանգ առան կայարանի մօտ: Սայլակից գուրս եկան հիւանդ կնոջ ամուսինն ու բժիշկը և մօտեցան կառքին:

— Ինչպէս էք զգում ձեզ, հարցրեց բժիշկը գարկերակը ընկելով:

— Է՛ ինչպէս ես, իմ բարեկամ, չ՞ս լոգնել, հարցրեց ամուսինը ֆրանսերէն, — չ՞ս ցանկանում գուրս գալ:

Մատրեօշան կապոցները հաւաքելով՝ կծկեց անկինում, որպէսզի շխանգարէ խօսակցելը:

— Ոչինչ, մինոյն է, պատասխանեց հիւանդը:

— Ես գուրս չեմ գալու:

Ամուսինը բիշ կանգնելով մտաւ կայարանական տունը: Մատրեօշան կառքից գուրս թռչելով՝ ցեխի մի-

շով ոտների ծայրերի վրայ վազեց դէպիդարպասաները:

— Ես որ ինձ վատ եմ զգում, այդ չէ կարող ձեր նախաճաշելուն արգելը լինել, — Ծեղթն կերպով ժամանակով ասաց հիւանդը բժշկին, որը կանված էր լուսամուտի մօտ:

«Նրանց ոչ որի հոգը չեմ ես,» աւելացրից նա ինքն իրան, մինչդեռ բժիշկը հանդարտ քայլերով հեռանալով նրանից, սրարշաւ բարձրացաւ կայարանի սանդուխքը: — «Նրանց բէֆը լաւ է, ուրեմն մինոյն է: Օ՛ Աստուած իմ!»

— Է՛, մնց է, էտուարդ Խվանօվիչ, ասաց ամուսինը՝ պատահելով բժշկին և ուրախ ժպտով ձեռները տրորելով, ես հրամայեցի ուտելելինի պահարանը բերել, զուք ինչ կասէր:

— Կարելի է, պատասխանեց բժիշկը:

— Է՛, նա ինչպէս է, — հառաշելով հարցրեց ամուսինը՝ ձայնը ցանծրացնելով և յունիքերը բարձրացնելով:

— Ես ասում էի, որ նա չէ կարող հասնել ոչ միայն իտակիա, այլ մինչև Մօսկվա, Աստուած տայ՝ հասնի: Մանաւանդ այս եղանակին:

— Դէ ինչ անել: Ախ, Աստուած իմ, Աստուած իմ: — Ամուսինը ծածկեց աշքերը ձեռքերով: — Այտեղ բեր, աւելացրեց նա մարդուն, որը ներս էր ըներում ճանհապարհորդական մոռանը:

— Մ'նալ պէտք էր, ուսերը թօթւելով՝ պատասխանեց բժիշկը:

— Բայց առացէք, ես էլ ի՞նչ կարող էի անել,
առարկից ամուսինը,—չէ որ ես ամեն հնար գործ
դրի, սրպէսզի նրան յետ կասեցնեմ. ես ասում էի
և միջացներիս մասին, և երեխաններիս մասին,—նա
ոչ մի բան լսել չէ ուզում: Նա այնպէս է ծրագիր-
ներ կազմում արտասահմանում վարելիք կեանքի մա-
սին, ինչպէս մի առողջ կին: Բայց ասել նրան իր
գրութեան մասին, չէ որ այդ կնշանակէր սպանել նրան:

— Բայց նա արդէն սպանւած է, գուք այդ
պէտք է որ իմահար, Վասիլիյ Դմիտրիչ: Մարդ չէ
կարող ապրել, եթէ նա թոքեր չունի, իսկ թորե-
րը կրկին տճել չեն կարող: Ցաւալի է, ծանր է,
բայց դէ ի՞նչ արած: Մեր և ձեր պարտքը միայն
այն պէտք է լինի, որ նրա վախճանը հանգիստ լի-
նի, որքան հնարաւոր է: Հարկաւոր է խոստովանող:

— Այս, Աստուած իմ, ախր հասկացէք, թէ իմ
գրութիւնը ինչ կլինի այն ժամանակ, երբ յիշեցնեմ
նրան իր վերջին ժամը: Թաղ լինի, ինչ լինելու է,
բայց ես չեմ ասիլ նրան այդ: Գուը հօ գիտէք, թէ
նա որքան բարի է . . .

— Բայց էլի փորձեցէք համոգել նրան, որ մնայ,
մինչի որ ձմեռը ճանապարհը լաւանայ, առաց բժիշկը՝
զլուխը խորհրդաւոր կերպով օրօրելով,—թէ չէ ճա-
նապարհին կարող է՝ ով գիտէ՝ ինչ պատահել . . .

— Ակսիւչա այ Ակսիւչա, ծկլթում էր կայարա-
նապետի աղջիկը՝ գլխին գցելով բաճկոնակը և յի-

տին կեղտուտ պատշգամբը կոխ տալով,—գնանք
տեսնենք Զիրկինսկայա տիկնոջը, ասում են՝ կրծքի
հիւանդութեան պատճառով տանում են արտա-
սահման: Ես գեռ երբէք չեմ տեսել, թէ ինչպէս
են լինում թորախտ ունեցողները:

Ակսիւչան գուրս թռաւ շեմբը, և երկորեան
իրար ձեռքից բռնած՝ դարպաներից գուրս վազե-
ցին: Քայլերը մեղմացնելով՝ նրանք անցան կառ-
քի մօտով և իջեցրած լուսամուտի միջով ներս նա-
յեցին: Հիւանդը գլուխը դարձրեց նրանց կողմը,
բայց նկատելով նրանց հետաքրքրութիւնը՝ դէմբը
խոժոռեց և երեսը դարձրեց:

— Եյ տունդ չքանդուի՛, ասաց կայարանա-
պետի աղջիկը՝ գլուխն արագ դարձնելով:— Ինչպի-
սի զարմանալի գեղեցկուհի էր, իսկ հիմա ինչ է
դարձել: Մարտափում եմ մինչև անգամ: Ցեսար, տե-
սար, Ակսիւչա:

— Հա, ինչ նիհար է, հաստատում էր Ակսիւ-
չան:— Գնանք էլի նայենք, իբր թէ ջրհորն ենք
նայում: Տես, երեսը դարձրեց, իսկ ես գեռ շեմ
տեսել: Ինչպէս ինեղնս է գալիս, Մաշա:

— Բայց ցեխ է, հա, պատասխանեց Մաշան,
և երկորեան յետ վագեցին դարպաններով:

«Երեխ ես դարհուրելի եմ դարձել, մտածում
էր հիւանդը:— Միայն թէ շուտ, որքան կարելի է՝

շնուտ արտասահման ընկնեմ, այստեղ ես շուտով
կլաւանամ:

— Ե՛, ինչպէս ես, բարեկամս, ասաց ամու-
սինը՝ մօտենալով կառքին և ծամելով պատառը:

«Միշտ միւնոյն հարցը, մտածեց հիւանդը, —
և գեռ ուտելով այնէլ!»

— Ոչինչ, ատամների արանքով արտասանեց
կինը:

— Գիտես, բարեկամս, ես վախենում եմ, որ
դու ճանապարհին աւելի վատանաս այս եզանակին,
էդուարդ Խանըին էլ նոյն է ասում: Զվերադառ-
նանը արգեօր:

Կինը բարեկացած լուսմ էր:

— Եղանակը կլաւանայ, կարելի է ճանապարհը
կրացուի, և դու էլ աւելի լաւ կլինես, այն ժամա-
նակ մենք բոլորս միասին կփնայինք:

— Ներիր ինձ: Եթէ ես վազուց լսած շլինէի բեզ,
այժմ կլինէի թերլինում և բոլորովին առողջ կլինէի:

— Ի՞նչ անենք, հրեշտակս, անկարելի է եղել,
դու զիտես! իսկ այժմ եթէ դու մի ամիս մնայիր,
փառաւորապէս կլաւանայիր, ես իմ գործերը
կը իրջացնէի, և մենք երեխաներն էլ կփերցնէինք:

— Երեխաներն առողջ են, իսկ ես՝ ոչ:

— Բայց ախր հասկացիր, բարեկամս, որ այս
եզանակին եթէ դու ճանապարհին աւելի վատա-
նաս... այն ժամանակ գոնէ կլինես:

— Ի՞նչ անենք, թէ տանը կլինեմ . . . Տանը
մեռնել, բորբոքւած պատասխանեց հիւանդը: Բայց
մ'եռնել խօսքն ըստ երկութիւն վախեցրեց նրան,
նա աղերսազին և հարցօրէն նայեց ամուսնուն: Հի-
ւանդի բերանը մանկան բերանի պէս ծուեց յան-
կարծ, և արցոնքները թափւեցին նրա աշքերից:
Ամուսինը դէմքը ծածկեց թաշկինակով և լուռ հե-
ռացաւ կառքից:

— Ո՛չ, ես կզնամ, ասաց հիւանդը՝ աշքերը
բարձրացնելով դէպի երկինը, ձեռները ծալեց և
սկսեց անկապ խօսքեր շշնչալ: — Աստւած իմ, ինչի
համար, ասում էր նա, և արցոնքները թափւում
էին աւելի ուժգին: Նա երկար և ջերմ աղօթեց,
բայց նրա կուրծքն էլի այնպէս ցաւում ու նեղա-
նում էր. երկնքում, դաշտերում ու ճանապարհին
նոյնպէս գժգոյն ու ամպամած էր, և նոյն աշնա-
նային մէզը ոչ արագ, ոչ դանդաղ, այլ միշտ միա-
կերպ թափւում էր ճանապարհի ցեխի վրայ. կը-
տուրների վրայ, կառքի վրայ և կառապանների
մուշտակների վրայ, կառապանների, որոնք իբար
հետ խօսակցելով ուրախ, գւարթ ձայներով, ձիւ-
թում էին և լծում էին կառքերը. . .

II

Կառքը լծւած էր. բայց կառապանն ուշա-

նում էր: Նա մտաւ կառապանային խրճիթը: Խըրճիթում շոգ էր, հեղձուցիչ, մուլթ և օդը ծանր, ընակութեան, թխած հայի, կազմամրի և ոչխարի մորթու հոտ էր գալիս: Մի քանի կառապան կար սենեակում, խոհարարուհին զրադած էր վառարանի մօտ. վառարանի վրայ ոշխարենիների մէջ պառկած էր մի հիւանդ:

Խւեղօր ապեր, ալ Խվեդօր ապեր, ասաց մի ջահել տղայ, կառապան, մուշտակը հազին և մըտրակը գոտին խրած, մտնելով սենեակը և գիմելով հիւանդին:

— Հյու, ընչի համար ես ուզում Փեղկային, դատարկապորտ, ձայն տւեց կառապաններից մինը.— Հրէն քեզ սպասում են, որ գնաս՝ կառքը բշես:

— Ուզում եմ կօշիկը խնդրել. իմը փուլ եմ ածել, պատասխանեց պատանին՝ մազերը գլխի շարժումով յետ գցելով և թաթմանները գոտիում տեղաւորելով:— Վայ թէ քնած է: Այ Խվեդօր ապեր, կրկնեց նա՝ մօտենալով վառարանին:

— Ի՞նչ ես ուզում, լսեց մի թոյլ ձայն, և մի խարտեաշ նիհար դէմք կուցաւ վառարանի վրայից: Մի լայն, մաշւած և գալկացած ձեռք՝ մազերով ծածկւած, արմեակը բաշում էր կեղտոտ շապկով ծածկւած ուսերին:— Զնոր տուր, ախպեր, ի՞նչ ես ուզում:

Պատանին ջրի փարչը նրան մատուցեց:

— Ի՞նչ պիտի լինի որ, Փեղիա, ասաց նա՝ կոտրտելով— ըեղ, գիտեմ, նոր կօշիկ հարկաւոր չէ հիմա. ի՞նձ տուր, գիտեմ, ման չես գալու:

Հիւանդը յոզնած դլխով վրայ ընկած ողորկ ջրամանին և նոսր, կախ ընկած բեխերը պղտոր ջրի մէջ թրջելով թոյլ ու անյագաբար խմում էր: Նրա խճճած միրութը մաքուր չէր, խոր ընկած, մարած աշքերը դժւարութեամբ բարձրացան նայելու պատանու դէմքին: Զրից յետ բաշուելով նա ուզեց ձեռքը բարձրացնել, որպէս զի սրբէ թաց զթունքները, բայց չկարողացաւ և սրբեց արմեակի թերով: Լուռ և քթով ծանր չնշելով նայեց պատանու աշքերին, ուժերը ժողովովելով:

— Կարելի է դու խոստացել ես մէկին տալ, ասաց պատանին, — իգուր: Բանն այս է, որ դուրս թացութիւն է, իսկ ես գործի եմ զնում, ասացի Փեղկայի կօշիկներն ուզեմ, նրան երկի հարկաւոր չեն: Կարելի է քեղ հարկաւոր են, ասա տեսնեմ . . .

Հիւանդի կրծքի տակ ինչ որ սկսեց տակնու վրայ լինել և զողոալ. նա երկտակւեց և սկսեց խեղզել կոկորդային, անխորխ հազով:

— Ել ինչի են պէտք, անսպասելի բարկացած՝ ամբողջ խրճթովը մէկ գոռաց խոհարարուհին:— Երկրորդ ամիսն է, ինչ վառարանի վրայից վէր չերկրորդ ամիսն է, ինչ վառարանի վրայից վէր չեր-

գալիս. տես, ճարւում է, մինչև անդամ մարդուն
ներսն էլ է ցաւում, երբ լսում է նրա ընչի՞ն են
հարկաւոր կօշիկները: Նոր կօշիկներով շեն թաղե-
լու նրան: Գեռ վաղուց պէտք է մեռած լինէր,
մեզայ քեզ, Աստուած: Տեսնում ես, ճարւում է:
Չեմ իմանում, տեղափոխեմ նրան միւս խրճիթը,
թէ որտեղ այդպիսի հիւանդանոցներ, զիտեմ որ
կան քաղաքում. թէ չէ ընչի՞ն ման է, ողջ տունը
բռնել է, ու: Փաժ գալու տեղ չկայ: Ուզում էլ են,
որ մաքրութիւն լինի!

—Ե՞յ, Սերեօգա, եկ նստիր, պարոններն սպա-
սում են, դրան միջով կանչեց փոստային կառա-
վարիչը:

Սերեօգան ուզեց դուրս գնալ՝ չսպասելով պա-
տասխանի, բայց հիւանդը հաղելու ժամանակ աշ-
քերով իմաց տւաւ, որ կամենում է պատասխանել:

—Վերցրն կօշիկները, Սերեօգա, ասաց նա՝
հազը զսպելով և քիչ հանգստանալով: —Միայն թէ,
տես, քար առ, երբ որ մեռնեմ, —խռոացնելով աւե-
լացրեց նա:

—Ընորհակալ եմ, ապեր, ուրեմն ես կը վեր-
ցնեմ, իսկ քարը ճշմարիտ՝ կառնեմ:

—Ա՞յ, տղերը, լսեցիք գեռ կարողացաւ արտա-
սանել հիւանդը և նորից երկտակւեց դէպի ցած ու
սկսեց խեղուել:

—Լաւ, լսեցինք, ասաց կառապաններից մինը,

—եկ, Սերեօգա, նստիր, բայց հրէն էլի կտուավա-
րիչը վազում է: Տես որ տիրուհի Շիրկինսկայան հի-
ւանդ է:

Սերեօգան արագութեամբ հանեց իր պատառո-
տած, չափազանց մեծ-մեծ կօշիկներն ու շպրտեց
թախտի տակ: Փէօդօր ապերի նոր կօշիկներն իսկ
և իսկ նրա ոտներին յարմար եկան, և Սերեօգան
նրանց մտիկ անելով դուրս եկաւ կառքի մօտ:

—Հայ լաւ կօշիկներ են, տներ քսեմ, ասաց
ձիւթը ձեռին կառապանն այն ժամանակ, երբ Սե-
րեօգան բարձրանալով կառքի նստարանը՝ ժողովում
էր սանձերը: —Զրի է տւել:

—Նախանձնում ես հա, պատասխանեց Սերե-
օգան՝ տեղից բարձրանալով և ոտների մօտ շուռ
տալով արմեակի վիշերը: —Թո՞ղ: Ե՞յ ջան, գոռաց
նա ձիերի վրայ, մարակը շարժեց, և կառքն ու սայ-
լակն իրանց հեծորներով, պայուսակներով ու կառքի
արկղիկներով կորչերով աշնանային մոխրագոյն ամ-
պերում արագ սլացան թաց ճանապարհով:

Հիւանդ կառապանը մնաց խրճիթում վառա-
րանի վրայ և չկարողանալով խորխ թքել մեծ ճի-
գերով շուռ եկաւ միւս կողքին ու լոեց:

Մինչեւ երեկոն խրճիթն էին գալիս, գնում, ճա-
շում էին, հիւանդը ոչինչ չէր անում: Գիշերւայ դէմ
խոհարարուհին բարձրացաւ վառարանը և հիւանդի
ոտների վրայով վերցրեց մուշտակը:

— Դու ինձ վրայ բարկանալ մի, Նաստասիա,
արտասանեց հիւանդը, շուտով տունդ կընդարձակւի:

— Լաւ, լաւ, ինչ եղաւ որ, ոչինչ, ես հէնց
այնպէս ասացի, մըթմըթաց նաստասիան: — Բայց ի՞ն-
չըդ է ցաւում, ապեր: Ասա տեսնեմ:

— Ողջ ներսս կոտորում է: Աստուած գիտէ,
թէ ինչ:

— Երեխ կոկորդդէլէ ցաւում, երբ հազում ես, հա:
— Ամեն տեղս ցաւում է: Մահս հասել է — այ
թէ ինչ: Օ՛խ, օ՛խ, օ՛խ, հէծեծաց հիւանդը:

— Ոտներդ այ այսպէս ծածկիր, ասաց նաստա-
սիան արմեակը նրա վրայ գցելով և իջնելով վա-
ռարանից:

Թիշերը խրճթում թոյլ լուսաւորում էր գիշեր
— ճրագը: Նաստասիան և տասի չափ կառապան-
ներ բարձրածայն խորմփոցով քնած էին յատակի և
թախտերի վրայ: Միայն հիւանդն էր թոյլ ճտճտում,
հազում և շուռումուռ գալիս վառարանի վրայ Առա-
լուսեան գէմ նա բոյրովին լոեց:

— Ինչ որ մի զարմանակի երազ եմ տեսել այ-
սօր, ասում էր խոհարարուհին միւս օրը՝ կիսալո-
սում ձգձգւելով: — Ես տեսայ, որ իրը թէ Խվեղօ-
րը վառարանից վէր է գալիս ու գնում փայտ կո-
տորելու: Թող, ասում է, նաստիա, ես քեզ օգնեմ.
իսկ ես նրան ասում եմ — գու ինչ ես, որ փայտ
կոտորես. բայց նա մէկ էլ տեսնեմ վերցրեց կացինը,

սկսեց կոտորել այնպէս արագ, այնպէս արագ, որ
ցլեփները դէս դէն էին թռչում: Սա ինչ բան է,
ասում եմ, ախր դու հիւանդ էիր: Զէ, ասում է,
ես առողջ եմ, ու այնպէս բարձրացրեց կացինը,
որ ես սարսափեցի: Այնպէս գոռացի, որ զարթնե-
ցի: — 2ի մեռել հօ: Խվեղօր ապեր, այ ապեր:

Փէօդօրը ձայն շէր հանում:

— Ճշմարիտ, հօ շի մեռել: Գնամ տեսնեմ, ա-
սաց զարթնած կառապաններից մէկը:

Վառարանի վրայից կախ ընկած դալուկ ձեռ-

քը՝ շէկ մազերով ծածկւած, սառն էր ու գունատ:

— Գնամ կայարանապետին ասեմ: Կարծեմ մե-
ռել է, ասաց կառապանը:

Փէօդօրն աղգականներ չունէր նա օտար էր:
Միւս օրը նրան թաղեցին անտառի յետել նոր գե-
րեզմանում, իսկ նաստասիան մի քանի օր պատ-
մում էր բոլորին իր տեսած երազը և այն, թէ նա
առաջինն է իմացել Փէօդօրի մեռած լինելը:

III

Գարունը եկաւ: Քաղաքի թաց փողոցներում,
աղբի սառցակտորների միջով քշշում էին շտապող
առւակները. եռուն ժողովրդի շորերի գոյնը և խօ-
սակցութեան հնչիւնները վառ էին: Պարտեզների
ցանկապատերի յետերի կոկոններն ուռչում

էին, և նրանց ոստերը հազիւ լսելի ձայնով օրօր-
ւում էին թարմ քամուց . . . ձնձգուկներն անկարդ
ծւծում էին և թռչկոտում իրանց փոքրից թեփկ-
ներով: Արեի տակ, ցանկապատերի, տների և ծա-
ռերի վրայ ամեն ինչ շարժւում և փայլում էր: Ռւ-
րախ, մատաղ էր առեն ինչ և երկնքում, և' երկրում,
և' մարգուս սրտում:

Գլխաւոր փողոցներից մէկում մի մեծ տան
առաջ փռած էր թարմ ծղոտ. այդ տանն էր գտնւում
այն մեռնող հիւանդ կինը, որ շտապում էր արտա-
սահման:

Սինեակի տակ գոների մօտ կանգնած էին հի-
ւանդի ամուսնու և մի տարիքաւոր կին: Դիվանի
վրայ նստած էր բահանան՝ աշքերը ցած դցած և
գստկում փաթառած մի ինչ որ բան ձեռքին: Մի
անկիւնում վօլտերիան բաղմաթոսի վրայ պառկած
էր մի պառաւ—հիւանդի մայրը և գառը լալիս էր:
Աղախինը նրա մօտ ձեռքին բռնած էր մի մաքուր
քթի թաշկինակ՝ սպասելով, որ պառաւը պահան-
ջէ այն. մի ուրիշ կին ինչ—որ բանով շրփում էր
պառաւի քոնքերը և հեղուկ էր փշում նրա շամ-
շկի տակի ալերը մաղերին:

— է, Տէր ընդ ձեզ, բարեկամս, ասում էր
ապրիրաւոր կնոջը հիւանդի ամուսնու, որ կանգ-
նած էր դրան մօտ,—նա այնպէս հաւատ է ընծա-
յում ձեզ, դուք այնպէս խօսել էր կաբողանում նրա

հետ, մի լաւ համոզեցէր նրան, հոգեակս, զնացէր
էլի:—նա կամենում էր արդէն բանալ դուռը, բայց
բարեկումուհին յետ պահեց նրան, թաշկինակը մի
բանի անգամ աշքերին տարաւ և գլուխը թօթւեց:

— Ահա, այժմ կարծեմ լացած լինելս չէ եր-
եւում, ասաց նա և ինքը բանալով դուռը՝ դուրս
եկաւ:

Նմուսինը սաստիկ յուզւած էր և բոլորովին
իրան կորցրած էր երկում: Նա ուղեց պառաւին մօ-
տենալ, բայց մի բանի քայլ մնացած՝ յետ գարձաւ,
անցաւ սենեակովը մէկ և մօտեցաւ բահանային: Քա-
հանան նայեց նրան, յնքերը գէպի երկինք բարձրա-
ցրեց և հառաչեց: Նրա խիտ ալեխանն մորուրը
նոյնպէս բարձրացաւ և իջաւ:

— Մայրիկն էլ է այստեղ,—համարեա յուսա-
հատւած ասաց ամուսնը:— նա չի դիմանալ: Այր
այնպէս է սիրում, այնպէս է սիրում նրան, ինչ-
պէս նա... էլ չգիտեմ: Գոնէ դուք, նէր-հայր, փոր-
ձեցէր հանգստացնել նրան և համոզել, որ այստե-
ղից հեռանայ:

Քահանան վերկացաւ և մօտեցաւ պառաւին:

— Ճշմարիտէ, մօր սիրտը ոչ ոք գնահատել չէ:
կարող, ասաց նա, սակայն Աստւած ողորմած է:

Պառաւի գէմքը յանկարծ սկաեց ամբողջապէս
շարժւել, և նա սկսեց խօսերիկաբար հեծկտալ:

— Աստւած ողորմած է, — շարունակեց բահա-

նան, երբ պառաւը թիշ հանդարտւեց:—Ես ձեզ կը յայտնեմ, որ իմ ծխում մի հիւանդ կար, շատ աւելի վատ Մարիա Թմիտրիեվնիայից. և ինչ, մի հասարակ մէշշանին ինչոր խոտով բժշկեց նրան կարճ ժամանակամիջոցում: Եւ մինչեւ անդամ այդ նոյն մէշշանին այժմ մասկվայումն է: Ես տսել եմ Վասիլիյ Դմիտրիեվիչին կարելի էր փորձել: Գոնէ հիւանդի համար միսիթարութիւն կլինէր: Աստծու ձեռին է ամեն բան:

—Ո՛չ, նա էլ ասլրողը չէ,—արտասանեց պառաւը,—Աստւած ինձ տանելու տեղ նրան է տանում: Եւ իստերիկական հեծկոցն այնպէս սաստկացաւ, որ նա ուշաթափւեց:

Հիւանդի ամուսինը դէմքը. ծածկեց ձեռներով և գուրս փախաւ սննեակից:

Նախասնեակում նրան պատահած առաջն մարդը մի վեց տարեկան տղայ էր, որ բոլոր ուժով աշխատում էր փորք աղջկայ յետելից համնել:

—Է՛, չէք հրամայիլ երեխաներին մայրիկի մօտ տանել, հարցրեց ծծմայրը:

—Ո՛չ, նա չէ կամենում դրանց տեսնել: Այդ նրան կրայքայէ:

Տղան մի բովէ կանգ առաւ՝ աշքերը յառելով հօր դէմքին ու յանկարծ ոտը թխկացրեց և ուրախ ձայն արձակելով՝ դէնը վաղեց:

—Այդ նա իրեն թէ ու ձին է, հայրիկ, —կան-

շեց երեխան՝ մատնացոյց անելով քրոջը:

Մինչ այս, միւս սենեակում նստած էր բարեկամուհին հիւանդի մօտ և վարպետօրէն անւողխոսակցութեամբ աշխատում էր նրան նախապատրաստել մահւան դէմ: Բժիշկը միւս լուսամուտի մօտ խառնում էր մի խմելիք:

Հիւանդը ճերմակ կրկնոցը հագին, ամեն կողմից բարձերափ շրջապատւած, նստած էր անկողնում և լուռ նայում էր բարեկամուհուն:

Ա՛խ, բարեկամ, ասաց նա՝ յանկարծակի ընդհատելով նրա խօսքը,—մի պատրաստէք ինձ: Ինձ երեխայի տեղ մի դրէք: Ես քրիստոնէութիւնի եմ: Ես բոլորը գիտեմ: Ես գիտեմ, որ երկար ապրողը չեմ, ես գիտեմ, որ եթէ ամուսինս շուտ լուծ լինէր իմ խօսքին, ես իտալիա կլինէի և գուցէ, մինչեւ անդամ հաստատպէս՝ առողջ կլինէի: Այս ամենըն են տսել նրան: Բայց ինչ արած, երիի Աստծուն այսպէս է հաճելիք: Մենք ամենըն էլ շատ մեղք ունենք, ես գիտեմ այդ. բայց յոյս ունեմ Աստծու ողորմութեան վրայ, բոլորը կներւին, երիի բոլորը կներուին: Ես աշխատում եմ ինքս ինձ հասկանալ: Ե՞ս էլ շատ մեղք ունէի, բարեկամս: Բայց դրա տեղակ ես որքան եմ տանջւել: Ես աշխատել եմ համբերութեամբ կրել իմ տառապանքները...
Ուրեմն կանչեմ տէր-հօրը, բարեկամս, դուք

աւելի կլժելժեանսպ՝ հազորթւելով, ասաց բարեկամուհին:

Հիւանդին ի նշան համաձայնութեան՝ կռացրեց դլուխը:

—Աստանած, ներիր ինձ մեղաւորիս շնչաց նա:

Բարեկամուհին գուրս եկաւ և աշքով արաւտէրին:

—Նա մի հրեշտակ է, արցունքն աշքերին ասաց նա հիւանդի ամուսնուն: Ամուսինը լաց եղաւ, բահանան գուրս եկաւ, ոլառաւը գեռուչաթափ էր, և առաջին սենեակում միանգամայն խաղաղութիւն տիրեց: Հիւգ բռպէից յետոյ քահանան գուրս եկաւ գոնից և գոտին հանելով ուղղեց մաղերը:

—Փառք Աստծու, նրանք աւելի հանգիստ են այժմ, ասաց նա, —կամենում են ձեզ տեսնել:

Բարեկամուհին և ամուսինը գուրս զնացին: Հիւանդը մեղմ լալիս էր՝ նայելով օլատկերին:

—Ճնորհաւորում եմ, բարեկամու, ասաց ամուսինը:

—Ճնորհական եմ, ինչ լաւ եմ այժմ, որպիսի անըմբոնելի բազցրութիւն եմ ճաշակում ես, ասում էր հիւանդը, և թեթե ժպիտը խաղում էր նրա նուրբ շրթունքներին: —Ճշմարիտ չէ: Նա ողորմած է և ամենակարող, չէ: —Եւ նա նորից անյագ աղաշան-

րով սկսեց նայել պատկերին արցունքով լի աշբերով:

Յետոյ կարծես ինչ որ բան միտն լնկաւ: Նա նշաններով կանչեց ամուսնուն իր մօտ:

—Դու երբէք չես ուզում կատարել այն, ինչ որ ես իննդրաւմ եմ, ասաց նա թոյլ և անբաւական ձայնով...

Ամուսինը վիզը երկարացրած՝ հնազանդութեամբ լսում էր նրան:

—Ինչ, բարեկամո:

—Քանի անզամ եմ ասել, որ այս բժիշկները ոչինչ չգիտեն. հասարակ հէքիմ—կանայք կան, նրանք բժշկում են... այ, տէր-հայրն էր ասում... . Մարդ ուղարկիր . . .

—Ում յետեկից, բարեկամո:

—Աստուած իմ, ոչինչ չէ ուզում հասկանալ . . . Եւ հիւանդը դէմքը խոժոռեց ու փակեց, աշքերը:

Բժիշկը նրան մօտենալով բռնեց նրա ձեռքից: Զարկը քանի գնում նկատելի կերպով թուլանում էր: Նա հիւանդի ամուսնուն աշքով արաւ: Հիւանդը նկատեց այդ շրթունքը և վախեցած նայեց շուրջը: Բարեկամուհին երեսը դարձրեց և լաց եղաւ:

—Մի լար, մի տանջիր քեզ ու ինձ, ասում էր հիւանդը, զու դրանով իմ վերջին հանգիստն ես խլում:

— Թու մի հրեշտակ ես, ասաց բարեկամուհին՝
համբուրելով նրա ձեռքը:

— Զէ, այստեղս համբուրիր, միայն մեռելների
ձեռքն են համբուրում: Աստուած իմ, Աստուած իմ:

Նոյն երեկոյին հիւանդն արդէն դիակ էր դար-
ձած, և դիակը գավազում դրւած էր մեծ տան
դահլճում: Դոնփակ մի մեծ սենեակում նստած էր
տիրացուն և ըթով՝ համաշափ ձայնով կարգում էր
Դաւթի երգերը: Մոմի վառ լոյսն արծաթէ մոմա-
կուներից ընկնում էր ննջեցեալի դժգոյն ճակատի
վրայ, նրա մոմանման, ծանր ձեռների և ծնկների
ու ոտների մատերի վրայ բաձրացած ծածկոցի բա-
րացած ծալածքների վրայ: Տիրացուն առանց հաս-
կանալու իր խօսքերը՝ համաշափ կարգում էր, և
խաղաղ սենեակում տարօրէն հնչում ու կորչում
էին խօսքերը: Հեռաւոր սենեակից մէկ-մէկ հաս-
նում էին մանկական ձայների և նրանց ոտեսերի
թմփթմփոցի հնչիւնները:

«Թագուցանես զերես քո—խոռովին», ասում է
սազմուը, «առնես ՚ի նոցանէ զհողին—մեռանին և
դառնան ՚ի հող խրեանց: Առաջես զհողին Քո-վե-
րածնին և նորոգին զերեսս երկրի: Եւ եղիցի փառք
տեառն յաւիտեանս»:

Ննջեցեալի դէմքը խիստ էր ու վեճ: Ոչ պարզ
սառ ճակատին, ոչ ամուր փակւած շրթունքներին
ոչինչ չէր շարժում: Նա ամբողջապէս ուշադրու-

թիւն էր դարձած: Բայց հասկանում էր նա գոնէ
այժմ այդ մեծ խօսքերը:

ԽՎ

Մի ամսից յետոյ ննջեցեալի շիրմի վրայ քարէ
աղօթատուն կառուցւեց: Կառապանի շիրմի վրայ
տակաւին քար չկար, և միայն բաց-կանաչ խոտն էր
ծլում այն հողաթմբի վրայ, որ միակ նշանն էր
մարդկային անցած գոյութեան:

— Մեզը կանես, Մերեօգա, ասաց մի անգամ
կայարանի խոհարարուհին, եթէ Խվէդորի վրայ քար
չցցես: Առաջ ասում էիր՝ ձմեռ է, հա ձմեռ է, իսկ
հիմա ինչու խոստումդ չես կատարում: Ախր ինձ
մօտ խոստացար: Նա արդէն մի քանի անգամ եկել
է քեզ մօտ, խնդրել, չես առնի, մէկ էլ կգայ, հո-
գիդ կառնի:

— Է, ես ուրանում եմ, ինչ է, պատասխանեց
Մերեօգան, — ես քարը կառնեմ, ինչպէս ասացի,
կառնեմ, մանէթուկիսանոց կառնեմ: Ես չեմ մոռա-
ցել, քայց ախր բերել է հարկաւոր: Հենց որ քաղաք
վնալու լինեմ, կառնեմ:

— Դոնէ մի խաչ տնկէիր էլի, ձայն տւաւ մի
ծեր կառապան, — թէ չէ ուղղակի վատ ես անում:
Կօչիլիները հօ հավնում ես:

— Ես որտեղից գտնեմ խաչ, կոճղից չի շինւիլ:

—է՛ ինչես ասում: Կոճղից չի շինւիլ վերցրնւ կացինը, վազ առաւօտեան գնա անտառն ու շինիր պրծիր էլի: Մի հացի ծառից-բանից կըկտրես, և խաչը կպատրաստի: Թէ չէ գնա ու անտառապահին էլ խմացրու: Ամեն մի զատարկ բանի համար հօչէ կարելի խմացնել: Հրէն ինօքը ես կոտրեցի կառրի լուծը, աւելի լաւ նորը շինեցի, ոչ ոք ոչ մի խոսր չասաց:

Վազ առաւօտեան արշալոյսը բացւելուն Սիրիովան վերցրեց կացինն ու գնաց անտառ:

Ամեն բան ծածկւած էր դեռ նոր իջած, արելից շլուսաւորւած ցողի սառը կաթնագոյն ծածկոցով: Արեկերն աննկատելի կերպով պարզում էր իր թոյլ լոյն արտացոլելով բարակ ամպերով սրօռւած երկնակամարի վրայ: Ոչ մի խոտ ներքեւում, ոչ մի տերի ծառի վերին ոստիկի վրայ չէր շարժւում: Միայն անտառի խորքում՝ մերթ-մերթ լուսող թիերի կամ երկրի վրայ սոսափիւնի ձայներն էին խանգարում անտառի խտղաղութիւնը: Յանկարծ մի տարօրինակ, բնութեանը խորթ ձայն հնչեց և մարեց անտառի ծայրում: Բայց նորից լուսեց ձայնը և սկսեց համաշափօրէն կրկնել ներքեւում անշարժ ծառերից մէկի բնի մօտ: Կատարներից մէկն արտասովոր կերպով դողդողաց, նրա հիւթալի տերեններն ինչ որ փափոցին, և նրա ոստիկներից մէկի վրայ նատած թուխկատար—թուչնիկը սուլելով վեր թուաւ


երկու անգամ և պոչը շարժելով՝ նստեց միւս ծառի վրայ:

Կացինը ցածրում հնչում էր աւելի ու աւելի խուզ: Հիւթալի ճերմակ տաշեղները թռչում ընկնում էին ցօղագարդ խստերին, և հարւածների ետքից մի թեթև ճայթիւն լուսեց: Ծառը ցնցւեց ամրողապէս, թերւեց և արագութեամբ ուղղւեց՝ վախեցած ճօճւելով իր արմատի վրայ: Մի վայրկեան ամեն ինչ լուսեց, բայց նորից թերւեց ծառը, նրա բնից մի ճայթիւն լուսեց, և ճղները կոտրելով ու սոստիկներն իջեցնելով՝ նա կատարի վրայ զլորւեց խոնաւ գետին: Կացնի և բայլերի ձայները լուսեցին: Թուխկատարը սուլեց և վեր թռուաւ: Այն շիւզը, որին նա իր թիերով ընդհարւեց, մի քիչ ճօճւեց և միւսների նման հանդարաւեց իր բոլոր տերեններով: Ծառերն էլ աւելի էին գեղեցիկ թւում իրանց անշարժ սոստիկներով նոր ընդարձակութեան մէջ:

Արեի առաջին շողերը կտրելով թափանցկացող ամպերը՝ փայլեցին երկներում և փաղեցին երկրսով ու երկներով: Թուխապն սկսեց բուլա-քուլա լցւել անձուները, ցողը փայլելով՝ պսպած կանաչի վրայ, թափանցիկ ճերմակած ամպերն շտապելով ցրւեցին կապտացող երկնակամարում: Թոշունները լուցւեցին անտառում և անփոյթի պէս ծլւացին ինչոր երջանիկ բան: Հիւթալի տերենները ուրախ ու հան-

գիստ շրջում էին բարձունքներում, և կենդանի
ծառերի ոսակիները հանդարտ, վեհօրէն օրօրւեցին
մեռած ընկած ծառի վրայ:





ՀՀ Ազգային գրադարան



NL0327216

14.079

